

«Նոր ժամանակների կրթություն» ՀԿ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏՎՈՐՄԱՆ ՈՒՑՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության
գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և
դաստիարակությունը դպրոցում:

Առարկան՝ Ես և շրջակա աշխարհը

Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Ի. Նիկողոսյան

Ուսումնական հաստատություն՝ «Մրգաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թվում է՝ երկար ժամանակ չէ, ինչ մարդկությունը մտահոգված է բնապահպանության խնդիրներով: Բնապահպանական կրթությունը կոչված է զարգացնելու մարդուն անհրաժեշտ այնպիսի հմտություններ և վերաբերմունք, որոնք պետք են նրան իր մշակույթի և շրջապատի փոխհարաբերությունները հասկանալու և գնահատելու համար: Բնապահպանական կրթությունը կոչված է դաստիարակելու, ձևավորելու այնպիսի հասարակություն, որը տեղյակ է բնապահպանական հիմնախնդիրներին ու հարցերին, ունի որոշակի գիտելիքներ, հմտություններ անհատական և միասնական ջանքերով ընթացիկ խնդիրները լուծելու և նորերը կանխելու համար: Այն ներառում է գիտելիքներ ինչպես տարբեր առարկաների և գիտությունների, այնպես էլ վյանքի տարբեր բնագավառների՝ տնտեսության, առողջապահության, տեղեկատվական տեխնոլոգիաների, քաղաքականության վերաբերյալ: Այն ընդգրկում է ողջ Երկիր մոլորակն ու անգամ տիեզերքը:

Այսօր անհրաժեշտ է խորապես ճանաչելու բնության հետ առնչվելու և ներդաշնակ ապրելու մեր նախնիների փորձը: Ինչու՞ էին հայոց թագավորները անտառ տնկում և խստորեն պատժում անտառը հատողներին ու որսագեղերին, ինչու՞ էր Սասունցի Դավիթը անբարո և համարում պատնեշված տարածքում կենդանիների որսը: Մինչդեռ այսօր անգամ ուղղաթիռի լուսամուտից կարելի է որս անել:

«<Ես և շրջակա աշխարհը >> դասընթացը կոչված է օգնելու երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության մասնիկ: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է կառուցել իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, գգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը: Աշակերտի մեջ քայլ առ քայլ պետք է ձևավորվի այն գիտակցությունը, որ ինքը աշխարհում մենակ չէ, որ իր սեփական ցանկություններից ու երազանքներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և, ինչպես ինքը, անկրկնելի անհատականություններ են, ուստի նույնպես արժանի են հարգանքի: Կրտսեր դպրոցականի պատկերացումներն ընդլայնվում են շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ: Երեխաներն ուսումնասիրում են իրենց բակը, քաղաքը, գյուղը, մարզը, հայրենիքը, նրա ներկան ու անցյալը, պատմամշակութային արժեքները, ծանոթանում են տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, սովորում են հասարակական վայրերում օրինակելի վարքագիծ դրսևորել, ձուլվել են բերում հաղորդակցական հմտություններ, առողջ և անվտանգ ապրելակերպի համար անհրաժեշտ կարողություններ:

Տարրական դպրոցում սովորողի գիտելիքները սերտորեն առնչվում են մայրենիին, մաթեմատիկային և այլ ուսումնական առարկաների: Այս դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները արժեքավոր են որպես հենք նոր գիտելիքների համար:

Դասընթացի ծրագիրը կազմված է երեք մասից և նախատեսվում է 2 - 4 - րդ դասարանների համար:

«<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի օգնությամբ աշակերտները սովորում են բացահայտել Հայաստանի բնության հրաշալիքները՝ համադրելով արվեստի և բնական գիտությունների ընձեռած հնարավորությունները:

Նայենք մեր շուրջը. Ինչպե՞ս են մարդիկ օգտագործում անտառները, ջուրը, հողը Բնության նկատմամբ անխնա վերաբերմունքը վկայում է, որ մարդը պատրաստ չէ ներդաշնակ հարաբերությունների մեջ գտնվել իրեն շրջապատող աշխարհի հետ:

Երեխայի աշխարհաճանաչողությունն սկսվում է շրջակա միջավայրի ճանաչումից:

Երեխայի ծանոթացումը կենդանի և անկենդան բնությանը, օրգանիզմների փոխազդեցությանը և փոխադարձ կապերին պետք է սկսել 5-6 տրեկանից: Հարկատր է նպաստել այն գիտակցության ամրապնդմանը, որ Երկիրը մեր ընդհանուր տունն է, իսկ մարդը՝ բնության մի մասնիկը: Այն պետք է պահպանել ու խնամել:

Կրտսեր դպրոցական երեխաներին տրվող բնապահպանական գիտելիքների ծավալը նրանց հնարավորություն է ընձեռնում ճանաչել, սիրել ու գնահատել շրջակա աշխարհը, հասկանալ բնության մեջ իրենց ճիշտ դրսևորելու անհրաժեշտությունը, զգալ իրենց բնության մի մասնիկը: Բնապահպանական դաստիարակչական գործընթացը նպաստում է էկոլոգիական կուլտուրայի ձևավորմանը: Դրա իրականացումն ավելի արդյունավետ է, երբ այն զուգակցվում է կերպարվեստի, երաժշտության կիրառմամբ, որն էլ բերում է երեխաների գեղագիտական դաստիարակությանը:

- Շրջակա միջավայրը մեզ շրջապատող բնական միջավայրն է՝ բույսերն ու կենդանիները, անկենդան աշխարհը, մարդու ստեղծած կառույցները՝ ճանապարհներ, էներգետիկ համակարգեր, գործարաններ, բնակավայրեր և այլն:

Այս բոլոր կառույցները փոխել են բնությունը և ներգործում են կենդանի օրգանիզմների, այդ թվում նաև մառդկանց վրա: Կենդանի օրգանիզմների՝ միմյանց և շրջակա միջավայրի հետ փոխհարաբերություններն ու կապերը, դրանց առանձնահատկություններն ու օրինաչափություններն ուսումնասիրող գիտությունը կոչվում է էկոլոգիա:

Էկոլոգիա տերմինն առաջին անգամ օգտագործել է գերմանացի գիտնական Էռնեստ Հեկկելը 1866 թ-ին: Էկոլոգիա բառը ծագել է հունական «օլոս»՝ տուն և «լոգոս»՝ գիտություն բառերից: Այսպիսով՝ էկոլոգիան գիտություն է, որն ուսումնասիրում է, թե ինչպես են ապրում կենդանի օրգանիզմներն իրենց բնական տանը, որոնք են այն գործընթացներն ու երևույթները, որ ապահովում են կյանքն այդ տան մեջ:

Էկոնոմիկա բառի առաջին արմատը նույնպես «տուն» է, իսկ երկրորդը՝ «հաշիվ» և նշանակում է տնտեսություն վարելու, հաշվելու արվեստ: Այդ նկատի ունենալով Հեկկելը գրում է. «Էկոլոգիա ասելով՝ հասկանում ենք բնության բնության էկոնոմիկային վերաբերվող գիտելիքների ամբողջությունը, կենդանու և նրան շրջապատող օրգանական և անօրգանական աշխարհների փոխհարաբերությունների ողջ բազմազանության ուսումնասիրությունը»:

- Մարդու ազդեցությունը բնության վրա էապես տարբերվում է մյուս կենդանի օրգանիզմների ազդեցությունից, քանի որ մարդը գործում է ոչ միայն իր մկանների ուժով, այլև իր խելքով: Նա պատրաստում է գործիքներ, սարքեր, մեքենաներ, օգտագործում է էներգիայի աղբյուրներ: Մարդը կարողանում է օգտագործել ողջ մարդկային հասարակության միտքն ու դարավոր փորձը: Սկզբնական փուլում մարդու զարգացումը ընթանում էր նկատելիորեն դանդաղ: Հազարավոր տարիներ առաջ մարդն օգտվում էր միայն քարե գործիքներից: 150 տարի առաջ առավելագույն արագությունը ձիու արագությունն էր: Ներկայումս տիեզերանավերը շարժվում են 30000 կմ/ժ արագությամբ: Մարդը շարունակ կատարելագործում է աշխատանքային գործիքները, տեխնոլոգիաները: Ձգտում է առավել հարմարավետ դարձնել իր

բնակարանը, աշխատավայրը, թեթևացնել իր աշխատանքը, իսկ դրա համար պահանջվում է ավելի շատ հումք՝ մետաղներ, փայտանյութ, էներգակիրներ՝ նավթ քարաշուխ, գազ, միջուկային վառելիք: Իսկ այդ ամենը կարող է ստանալ միայն բնությունից: Բայց այդ ամենի պաշարները բնության մեջ սահմանափակ են: Եվ որքան շատ է վերցնում մարդը բնությունից, այնքան ավելի է քայքայում բնական համակարգերը:

Բացի այդ մարդը բնությունը օգտագործում է որպես աղբավայր՝ իր համար անպետք ամեն ինչ այնտեղ կուտակելով: Վտանգելով բնական համակարգի գոյությունը՝ վտանգվում է նաև մարդու գոյությունը: Պատահական չէ, որ դեռ 1820թ-ին Ժան Բատիստ Լամարկն ասել է. «Թերևս կարելի է ասել, որ մարդու համար նախասահմանված է ոչնչացնել սեփական ցեղը՝ նախապես կյանքի համար ոչ պիտանի դարձնելով երկրագունդը >>:

Երեխաներին հարկավոր է տեղեկացնել մարդկանց՝ էկոլոգիապես ոչ գրագետ գործողությունների հետևանքներին: Նրանք պետք է իմանան, թե ինչպես պահեն իրենց բնության գրկում, տանը, քաղաքում և գյուղական միջավայրում:

- Պահպանելով բնությունը՝ մենք ապահովվում ենք մեր և մեր սերունդների առողջ ապրելակերպը : Մարդը բնության մի մասն է: Նա հազարավոր թելերով կապված է բնությանը:

Հարկավոր է ամենավաղ տարիքից երեխաների մոտ ձևավորել մարդու համար հիմնական արժեքները՝ ձևավորել մտորակի և սեփական երկրի կենսական շահերը պահպանող անհատ: Ամրապնդել երեխաների գիտելիքները անկենդան և կենդանի բնության, բնության երևույթների, տիեզերքի պահպանման և խնամքի մասին:

- Հայկական ազգային մտածողության ու պատկերացումների մեջ մեծ տեղ է գրավել մարդու կապը բնության հետ: Մ.թ.ա. VIII դարում ուրարտական Սարդուր թագավորն արհեստական անտառներ է տնկել այն ժամանակվա մայրաքաղաք Տուշպաի (Վան) շուրջը՝ քաղաքի կլիման բարելավելու նպատակով: Ուրարտացի թագավորն հասկանում էր, որ ծառերը գեղեցկացնում են քաղաքները և ավելի բարենպաստ կլիմայական պայմաններ ստեղծում՝ նվազեցնելու բարձր ջերմաստիճանը: Հայ պատմագիրները վկայում են, որ արհեստական անտառներ են տնկվել նաև Արմավիր, Արտամետ, Տիգրանակերտ, Արտաշատ, Երվանդակերտ քաղաքների շրջակայքում:

Անտառները հազարավոր տարիների մարդկային գործունեության հետևանքով անընդհատ փոփոխվել են : Այն, թե ինչպես են օգտագործվում բնական պաշարներն այսօր, կարող է ազդել հետագա տարիների մեր կյանքի որակի վրա: Մարդն արժևորում է անտառները՝ գեղագիտական, մշակութային, էկոլոգիական, տնտեսական, կրթական տեսանկյունից և որպես հանգստավայր տված օգուտների

համար : Անտառներն ազդում են օդի և ջրի որակի վրա , կանխում հողերի էրոզիան : Անտառները արդյունաբերական բազմաթիվ ճյուղերի համար տարատեսակ հումք են ստանալու : Երկրագնդի բնակչության աճին ամրնթաց՝ անտառային ռեսուրսների նկատմամբ պահանջները մեծանում են :

Այսօր մեզ հայտնի է, որ ծառերը մաքրում են օդը ծխից ու փոշուց : Ծառերի արմատային համակարգերը թույլ չեն տալիս , որ անձրևները քշեն – տանեն զառիթափերի հողը, կանխում են սողանքներն ու ջրհեղեղները : Սակայն, ցավոք սրտի, հայաստանի անտառները գնալով նոսրանում են : Ժամանակին Երևանի փողոցները լի էին բազմազան ծառատեսակներով : Քաղաքը նման էր հսկայական ծառաստանի : Սակայն 1990-ական թվականների սկզբին Երևանի, ինչպես նաև ողջ հայաստանի բնաշխարհը կտրուկ փոխվեց ավերիչ երկրաշարժի և էներգետիկ ճգնաժամի հետևանքով : Ցրտաշունչ ձմեռներին տաքանալու համար բազմաթիվ ծառեր հատվեցին : Երբեմնի ծառածածկ զբոսայգիներն ու անտառներն ամայացան :

- 1990-ականների սկզբներին՝ Գյումրիի երկրաշարժին հաջորդած տարիներին, Հայաստան ժամանած ամերիկահայերն առաջարկեցին ծառատունկ սկսելու գաղափարը : Մտահոգված լինելով էներգետիկ ճգնաժամի հետևանքով ստեղծված ծանր պայմաններով և անտառահատման խիստ աճով՝ նրանք հիմնադրեցին մի կազմակերպություն, որի նպատակն էր զբաղվել Հայաստանի անտառապատման , բնապահպանական և սոցիալական խնդիրներով : 1994 – 2010 թթ. ընթացքում <<ԷՑ-ԹԻ-ՓԻ>> բարեգործական հիմնադրամի աջակցությամբ տնկվել են 350000 ծառ :

Մեր առջև դրված կարևորագույն խնդիրներից է էկոլոգիական օրինաչափությունների իմացության հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը : Այս գործընթացը պետք է սկսել տարրական դասարաններից, քանի որ այս տարիքում երեխան ավելի հուզականորեն է ընկալում բնությունից ստացված տպավորությունները, և դրանք խորը հետք են թողնում նրա գիտակցության մեջ : Երեխան գիտակցում է, որ Երկիրը մեր ընդհանուր տունն է, և այն պետք է պահպանել ու խնամել :

- <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի նպատակն է՝ ամրապնդել և զարգացնել երեխաների գիտելիքները Երկիր մոլորակի և նրա բնակիչների վերաբերյալ, սեր արթնացնել և հոգատար վերաբերմունք ձևավորել նրա նկատմամբ, կարողանալ հիանալ բնության գեղեցկությամբ : Աշակերտները պետք է դրսևորեն բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ հոգատար, բարեխիղճ վերաբերմունք : Պա մեր և ապագա սերունդների առողջության ու բարենպաստ կյանքի ապահովման հիմնական գրավականն է : Բնապահպանական առաջընթացի ապահովման գործում կարևոր է բոլորի ներգրավվածությունը : Բարձրաստիճան պաշտոնյայից մինչև շարքային քաղաքացի պետք է գործի իր ուժերի ներածի չափով :

Այսօր Երկիր մուրաակը կանգնած է էկոլոգիական աղետի եզրին: Մեր ընդհանուր <<տունը >> կարող ենք փրկել բոլորս միասին: Մուրաակի վրա անաղարտ անկյուններ գրեթե չեն մնացել:

• Մարդ – բնություն փոխհարաբերությունները մտել են մի փուլ, երբ մարդիկ ստիպված են պայքարել ոչ թե բնությունը նվաճելու, այլ այդ <<նվաճման >> արդյունքում դեռևս հրաշքով պահպանված բեկորները փրկելու համար: Ամեն մարդ պետք է իմանա, թե էկոլոգիական ինչ վտանգներ են սպառնու իրեն և իր հարազատներին, իր տանն ու երկրին: Հարկավոր է տեղյակ լինել՝ ինչպես պաշտպանվել այդ վտանգներից և ինչ անել, որպեսզի դրանք աղետի չվերածվեն: Մեզանից յուրաքանչյուրը պատասխանատվության իր բաժինն ունի, և ամենքիս համատեղ ջանքերով միայն կարող են լուծվել էկոլոգիական մի շարք հիմնախնդիրներ:

• Շրջակա միջավայրի աղտոտումը նոր չի սկսվել: Քարե դարում մարդիկ ապրում էին զարշահոտ քարանձավներում, ահավոր կեղտոտ էին միջնադարյան քաղաքները, ուր տնից աղբն ու արտաթորանքը ուղղակի փողոց էին թափվում՝ բարեբեր միջավայր ստեղծելով հազար ու մի տեսակ համաճարակների առաջացման համար: Դեռևս մեր թվարկությունից 400 տարի առաջնշանավոր փիլիսոփա Պլատոնն անհանգստություն էր հայտնում, որ իր հայրենի հունաստանում հատվում էին անտառներ, իսկ հողը տուժում էր արոտավայրերի անխելամիտ օգտագործման պատճառով: Մակայն այսօր շրջակա միջավայրի աղտոտումն ընդունել է աղետալի, համամուրաակային չափեր: Մշտապես մեծ քանակությամբ վտանգավոր քիմիական նյութեր են արտանետվում մթնոլորտ, լցվում գետերն ու օվկիանոսները: Ավելի շատ չքայքայվող թափոններ են կուտակվում մեր շուրջը: Կրճատվում են անտառային տարածքները: Երկրի երեսից իսպառ վերացել են կենդանիների և բույսերի մի շարք տեսակներ:

• Մարդու և բնության միջև հակամարտության հասունացումը կանխատեսվել է դեռևս անհիշելի ժամանակներում: Քեոփսի բուրգի մակագրությունը զգուշացնում է. <<Մարդիկ կկործանվեն բնության ուժերն օգտագործել չկարեղանալու և իրկան աշխարհը չճանաչելու պատճառով>>:

Բարեբախտաբար, արսօր մեր երկրում գործում են տարբեր խոշոր կազմակերպություններ, որոնք ստանձնում են բնապահպանական ծրագրերի հովանավորությունը: Մի շարք բնապահպանական հասարակական կազմակերպություններ զբաղվում են բնապահպանական խնդիրներով՝ փառատոների կազմակերպում, անտառային տարածքների պահպանություն, թափառող կենդանիների պաշտպանություն, քարոզչություն՝ կենդանիների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի, հասարակության տարբեր շերտերին էկոլոգիական կրթության ապահովմամբ, անհրաժեշտ բնապահպանական տեղեկատվության տարածմամբ, էկոլոգիայի գրագրության զարգացմամբ:

Էկոլոգիական գիտելիքներով զինված բնակչություն ունենլու համար պետք է ապահովենք մեր երեխաների էկոլոգիական դաստիարակությունը՝ դեռևս նախադպրոցական տարիքից:

Էկոլոգիական դաստիարակությունը շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված էկոլոգիական գիտելիքների, կարողությունների, հմտությունների ուսուցման և փոխանցման համակարգված գործընթաց է: Էկոլոգիական դաստիարակությունն իրականացվում է ընտանիքի, նախադպրոցական և ուսումնական հաստատությունների համատեղ գործունեության միջոցով: Էկոլոգիական դաստիարակությունը էկոլոգիակն մշակույթի հիմքն է և սերտորեն կապված է էկոլոգիական ուսուցման հետ: Բնակչության էկոլոգիական դաստիարակությունը կարգավորվում է «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքով: Շատ կարևոր է էկոլոգիական դաստիարակությունը դպրոցում: Սովորողները պետք է կարողանան տեսնել, գնահատել, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները, հմտությունները փոխանցել ընտանիքի անդամներին, ընկերներին: Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը հասարակության առջև կանգնած գլխավոր խնդիրներից մեկն է: Էկոլոգիական սխալներ չանելու համար ժամանակակից մարդը պետք է զինված լինի էկոլոգիական գիտելիքներով: Դպրոցներում այն կարելի է կազմակերպել ակտիվ ուսուցման մեթոդներով: Դասի կազմակերպման հիմնական ձևը տեսական և գործնական պարապմունքներն են: Ուսուցման ձևերից են միջոցառումները, արշավների կազմակերպումները, բնության մեջ ուսումնական ճամփորդությունները, արգելավայրեր և արգելեցներ այցելելը: Կազմակերպել ծառատունկ, թզրթի թափոնի հավաքում, տարածքի կարգի բերում, ծառերի խնամք:

1970 թ-ի ապրիլի 22-ը ԱՄՆ-ում հռչակվել է Մոլորակի օր: Գաղափարը վերագրում են Միացյալ Նահանգներից սենատոր Նելսոնին, որը ականատես եղավ 1969 թ-ի Մանտա Բարբարա ծովափնյա քաղաքի ափերի մոտնավթի ահավոր արտահոսքին և կոչ արեց միավորվելու և բնապահպանական միջոցառումներ կազմակերպելու: Նա այս շարժումն առաջնորդելով՝ ցանկանում էր շրջակա միջավայրի խնդիրներին իր քաղաքական աջակցությունը ցուցադրել: 2009թ-ին Միավորված ազգերի կազմակերպությունը ապրիլի 22-ը պաշտոնապես հռչակեց որպես Մոլորակի օր: Այսօր արդեն այդ օրն ամեն տարի նշվում է աշխարհի ավելի քան 175 երկրներում և միջոցառումներին մասնակցում է մոտ 500 միլիոն մարդ: Մոլորակի օրվան նվիրված կարելի է կազմակերպել բաց դասեր և միջոցառումներ: Մեր հայրենիքը մեր մոլորակի փոքրիկ մասնիկն է: մենք մեր նախաձեռնություններով պետք է պաշտպանենք մեր վտանգված բնությունը:

Էկոլոգիական կուլտուրան սկզբնավորվում է համապատասխան բնույթի նախագիտելիքների կուտակմամբ: Դիտումները, բնապահպանական բովանդակությամբ խաղերը, խաղային զարգացնող իրավիճակների, հեքիաթների, մանկական տարբեր ստեղծագործությունների օգտագործումը, պարապմունքների, տոնահանդեսների, զբոսանքների, էքսկուրսիաների կազմակերպումը, մանկապարտեզներում և դպրոցներում կանաչ գոտիների ստեղծումը յուրաքանչյուր երեխայի մեջ կձևավորեն գիտակցական վերաբերմունք, գործնական վարքագիծ՝ բնապահպանության գործում: Դա էլ կդառնա էկոլոգիական դաստիարակության

չափանիշ: Էական է նաև ծնողների շրջանում էկոլոգիական գիտելիքների քարոզչությունը: Տարրական դասարանների աշակերտների էկոլոգիական կրթության դասընթացը իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել << ճանաչի՛ր, սիրի՛ր, պահպանի՛ր >> կարգաձևով: այդ կերպ հնարավոր է փոքրիկի մեջ ձևավորել ճանաչողական գիտելիքներ և ունակություններ իր և շրջակա միջավայրի վերաբերյալ, սեր արթնացնել այն ամենի նկատմամբ, ինչ շրջապատում է նրան՝ լինի դա կենդանի, թե անկենդանության մասնիկ:

Երեխայի մեջ կձևավորվի այն գիտակցությունը, որ ինքը աշխարհում մենակ չէ, և շրջակա աշխարհում ամեն ինչ սերտորեն փոխկապակցված է, բնության մեջ յուրաքանչյուր տարր պայմանավորված է մյուսի գոյությամբ:

• Էկոլոգիական կրթությունը նախատեսում է՝

Ա. Բնության նկատմամբ հումանիստական վերաբերմունքի դաստիարակում,

Բ. Էկոլոգիական տարրական պատկերացումների համակարգի ձևավորում,

Գ. Գեղագիտական զգացմունքների ձևավորում (կարողանալ տեսնել բնության գեղեցկությունը, զմայլվել նրանով, այդ զգացումներն արտահայտել ստեղծագործական գործունեությամբ՝ կերպարվեստով, հեքիաթ, ոտանավոր, պատմվածք հորինելով):

Նման գործառույթների իրականացման կարևոր պայմանը ծնողի, ուսուցչի և այլ մեծահասակների օրինակն է: Գիտակցական և ակտիվ բնապահպանական վերաբերմունքի ձևավորման չափանիշներն են՝

Ա. Բնության նկատմամբ խնամքի և հոգատար վերաբերմունքի դրսևորում՝ մարդկության համար դրա բարոյագեղագիտական և գործնական նշանակության նկատմամբ:

Բ. Կենցաղում, բնության մեջ գտնվելիս վարքագծի կանոնների յուրացում և կիրառում:

Գ. Բնության նկատմամբ գործնական հոգատարություն և այլոց վերաբերմունքի գնահատման կարողություն:

- Այս խնդիրների կարգավորման անհրաժեշտությունը նկատի առնելով՝ տարրական դասարանների համար առաջարկում են տարաբնույթ պարապմունքներ: Երեխաները էկոլոգիական գիտելիքներ ստանում են ոչ միայն << Ես և շրջակա աշխարհը >> առարկայի դասընթացից, այլև զբոսանքների, էքսկուրսիաների, դիդակտիկ խաղերի, տրամաբանական խնդիրներ լուծելու միջոցով:

• Զբոսանք արգում: Դպրոցի այգին նպաստավոր պայմաններ է ստեղծում երեխաների էկոլոգիական դաստիարակությունը կազմակերպելու համար: Այստեղ իրականացվում է բուսական և կենդանական աշխարհի հետ անմիջական ծանոթացում: Ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում է թռչունների դայլայլին: Սկսվում է զրույց թռչունների տեսակների, նրանց օգտակարության վերաբերյալ: Ուսուցիչը երեխաների էկոլոգիական գիտելիքներն ամրակայելու

նպատակով հարց է ուղղում տարվա եղանակների վերաբերյալ: Աշակերտները պատմում են եղանակային փոփոխությունների, յուրաքանչյուր եղանակին բնորոշ առանձնահատկությունների մասին: Գիտելիքների հետ մեկտեղ երեխաները բնության գրկում ստանում են դրական հույզեր:

✓ Բնագիտական կենտրոն: Այստեղ ներկայացված են բուսական աշխարհի տարբեր տեսակներ՝ սենյակային բույսեր, ծաղիկներ: Երեծաներին հնարավորություն է տրվում ծնամելու բույսեր և հետևելու նրանց աճին:

✓ Ընթերցանություն: Հատուկ ընտրված գրական ստեղծագործությունների միջոցով երեխաները ծանոթանում են ընտանի և վայրի կենդանիներին, նրանց տեսակներին բնորոշ առանձնահատկություններին: Գրական ստեղծագործություններում հաճախ բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչները ներկայացված են անձնավորված. նրանցից յուրաքանչյուրը հանդես է գալիս որոշակի բնավորությամբ, խառնվածքով, վարքով, ինչը ստիպում է երեխաներին համեմատել կլերպարները, վերլուծել:

✓ Դիդակտիկ խաղեր: Անցկացվում են հատուկ պլանավորված խաղեր, որոնք ունեն ուսուցողական ուղղվածություն: Դիդակտիկ խաղերն իրականացվում են տարբեր միջոցներով.

- Երեխաներին տրվում են տարբեր նկարներ, որտեղ կարող են պատկերված լինել բույսեր, կենդանիներ, ջրային և ցամաքային միջավայր: հատուկ հարցերի և խաղի կանոնների միջոցով բացահայտվու են երեխաների ճանաչողական ունակությունները, և լրացվում գիտելիքները:

- Ուսուցիչը երեխաներին ներկայացնում է կենդանի և անկենդան աշխարհի համար կենսական անհրաժեշտություն ունեցող երևույթներ և հարցերի միջոցով փորձում բացահայտել նրանց գիտելիքները: Օրինակ՝ ինչ կարող է լինել եթե հանկարծակի վերանա արևը, լուսինը, ջուրը, հողը:

- Տարբեր կենդանիների և բույսերի պատկերներով ներկայացվում են առարկաներ, և տրվում է առաջադրանք՝ ներկայացնել դրանց գույները, նշանակությունը, կարևորությունը, կապը այլ բույսերի և կենդանիների հետ: Անհրաժեշտ է անել առավելագույնը՝ կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ երեխաների մեջ գիտակցական վերաբերմունքի, սեփական դիտարկումներն ընդհանրացնելու և համեմատելու, շրջակա միջավայրի գեղեցկությունը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողության դաստիարակման նպատակով:

✓ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի խնդիրն է՝ ձևավորել մարդասեր, սոցիալապես ակտիվ, ստեղծագործող անհատ՝ ընդունակ սիրելու, հասկանալու շրջապատող աշխարհը, բնության առանձնահատկությունները, խնամքով վարվելու բնության հետև կանխատեսելու իր արարքների հնարավոր հետևանքները:

Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը ներկա ժամանակներում բնություն – մարդ փոխհարաբերությունների կարգավորում է՝ մարդկային բնապահպանական գործունեության միջոցով: Դրա արդյունքում ապահովվում է մարդկության հետագա գոյությունը: Պահպանելով բնությունը՝ մարդիկ պաշտպանում են իրենց գոյությունը: Ֆրանսիայում 5 – 6 տարեկան երեխաներին տանում են անտառ, ցույց տալիս ծառ ու ծաղիկ: Ծաղիկների կողքին մեծ վահանակներ են փակցնում. «Խնդրում ենք՝ մեզ չքաղել: Հենց այն պահին, երբ մեզ պոկեք, մեզ կսպանեք: վայրի ծաղիկներ»>>: Երեխան փոքր հասակից արդեն գիտի, որ խաղիկը քաղելով՝ ոչնչացնում է բնությունը: Նա այլևս չի պոկի խաղիկը: Այս հրաշալի մտահաղացումը կարելի է իրականացնել նաև մեր մանկապարտեզներում և դպրոցներում: Ժան Ժակ Ռուսոյի աշխատություններում հստակ ընդգծվում է երեխաներին բնության հարուստ աշխարհ ընդգրկելու անհրաժեշտությունը: մարդն ապրում է բնության շնորհիվ:

Երեխաներին բնապահպանական գործընթացի մեջ ներգրավելու անհրաժեշտությունը շեշտադրող մի պատմություն է էկոլոգիական մտածողությամբ օժտված 12 – ամյա շվեդ տղայի՝ Ռոլանդ Տիենդսուույի կյանքի դիպվածը: Երեխան պատահաբար հեռուստատեսությամբ դիտում է հաղորդում արևադարձային անտառների և դրանց գոյությանն սպառնացող վտանգների մասին: Նա լրջորեն անհանգստանում է հետևյալ մտքից. Երբ ինքը մեծանա, հնարավոր է, որ մոլորակի վրա այլև արևադարձային անտառներ մնացած չլինեն: Որոշում է անհապաղ ինչ որ բան ձեռնարկել, և նրա գլխում մի հետաքրքիր միտք է ծագում՝ համադասարանցիների հետ՝ ուսուցչի ղեկավարությամբ կազմակերպել թխվածքաբլիթների վաճառք, որից ստացված շահույթը ծառայեցնմել արևադարձային անտառների փրկության գործին: Երեխաների բիզնեսը հաջող ընթացավ, և նրանք շուտով կարողացան Հարավային Ամերիկայում գտնվող «Մոնտեվեդո» արգելոցի համար 4 հեկտար անտառ գնել: Օրինակը վարակիչ էր, և շուտով ստեղծվեց «Մանկական արևադարձային անտառ» միությունը, որի կազմում ընդգրկվեցին հազարավոր շվեդ դպրոցականներ: Իրենց հավաքած գումարով նրանք Կոստա Ռիկայում 7000 հեկտար տարածությամբ անտառ գնեցին նույն արգելոցի համար: Արգելավայրի ղեկավարությունը, ի նշան երախտագիտության, անտառային այդ տարածքն անվանեց «Մանկական անտառ՝ ընդմիջտ >>: Իսկ շվեդ երեխաների օրինակին հետևեցին այլ երկրների՝ Գերմանիայի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի նրանց հասակակիցները:

Էկոլոգիական շարժումն առաջին հերթին սկսվում է բակից. Յուրաքանչյուր ոք մաքուր պահելով իր բակը, ապահովում է մոլորակի մաքրությունը: «Դա շատ պարզ է՝ առավոտյան կարգի բերելով քեզ, կարգի բեր նաև քո Մոլորակը >>՝ խորհուրդ է տալիս Փոքրիկ Իշխանը՝ Սենտ Էքզյուպերիի համանուն հեքիաթ-վիպակում: Մեր մոլորակի մաքրության համար պատասխանատու ենք բոլորս:

Ներկայացվող պահանջներն արտահայտվում են սովորողի՝ որպես անձի և քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով: «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի ուսումնասիրման արդյունքում սովորողը պետք է՝

- . Հետաքրքրություն հանդես բերի աշխարհի նկատմամբ՝ իր ողջ բազմազանությամբ:
- . Հանդուրժող և բարյացակամ վերաբերմունք դրսևորի այլ մշակույթների նկատմամբ:
- . Հոգատար լինի կենդանի էակների նկատմամբ:
- . Գիտակցի բնական պաշարների սահմանափակ լինելը, խնայողական վերաբերմունք ունենա բնական պաշարների հանդեպ:
- . Սիրի բնությունը, գնահատի նրա գեղեցկությունը:
- . Պատասխանատու վարքագիծ ունենա բնության հանդեպ:
- . Սիրի հայրենիքը, պատասխանատու վարքագիծ ունենա հայրենիքի հանդեպ:
- . Կարևորի իր հայրենիքի պատմամշակութային արժեքները:
- . Լինի ընկերասեր, կարևորի փոխօգնությունն ու համագործակցությունը:
- . Գնահատի ուրիշների աշխատանքն ու հաջողությունները:
- . Կարևորի բարեկիրթ հաղորդակցման դերը միջանձնային հարաբերություններում, կարողանա համագործակցել:
- . Լինի ազնիվ, արդարամիտ, բարի, պարտաճանաչ, պատասխանատու:
- . Չհանդուրժի կեղծիքը, իրավունքների ոտնահարումը և անարդարությունը:
- . Գիտակցի սեփական կարծիքը հստակ ձևակերպելու, ուրիշներին հասկանալու անհրաժեշտությունն ու կարևորությունը փոխըմբռնման համար:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

- . Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:
- . Հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները՝ լինի հայրենասեր; կարևորի ազգային հիմնախնդիրների լուսման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:
- . Գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում:

. Գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը:

. Կարևորի բարոյական չափանիշները, քրիստոնեական ու համամարդկային ազժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթԼ:

. Կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղացիկը, բարին և ճշմարիտը, գիտակցի իր տեցն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ: Լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք:

. Գիտակցի ծնողներհ, տարիքով մեծերի, փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հսրգանքի դրսևորման կարևորությունը:

. Հարգի մարդու իրավունքներն ու ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ:

. Գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը:

. Դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժեվորի ու գնահատի սեփական ու այլոց աշղատանքը:

. Հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի արողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

<<Ես և շրջակա աշխարհը >> առարկան նպաստում է դաստիարակելու, ձևավորելու այնպիսի հասարակություն, որը տեղյակ է բնապահպանության խնդիրներին ու հարցերին, ունի որոշակի գիտելիքներ, վերաբերմունք, հմտություններ անհատապես և միասնական ջանքերով ընթացիկ խնդիրները լուծելու և նորերը կանխելու համար:

Բնապահպանական կրթությունը արժեքների ճանաչման և ընկալումների պարզաբանման մի գործընթաց է: Այն կոչված է զարգացնելու մարդուն անհրաժեշտ այնպիսի հմտություններ ու վերաբերմունք՝ որոնք անհրաժեշտ են նրան իր մշակույթի ու կենսաֆիզիկական շրջապատի փոխհարաբերությունները հասկանալու և գնահատելու համար: Հարկավոր է ձևավորել բնապահպանական վարքագիծ առանձին անհատների, խմբերի, ողջ հասարակության շրջանում: Հարկավոր է հասնել այն բանին, որ աշակերտները կարողանան իրենց ձեռք բերած գիտելիքները գվրծնականում կիրառել:

Առարկան նպաստում է ըմբռնելու քաղաքական, տնտեսական ու բնապահպանական խնդիրների փոխշաղկապվածությունը:

Բուսաբանության պրոֆեսոր, շոտլանդացի Պատրիկ Գեդիսը առաջիններից էր, որ նոր գաղափարներ առաջադրեց և երեխային որպես ամբողջական անձ դիտարկեց և կիրառեց բացօթյա պարապմունքներ: Բարենպաստ եղանակին ուսուցիչը կարող է աշակերտների հետ ուսուցողական զբոսանք կատարել մոտակա զբոսայգիներում, դաշտերում, սարերում: Էքսկուրսիաների շնորհիվ երեխաները կարողանում են զգալ գիտական տեղեկատվության և հայրենի բնության գեղեցկության միջև ուղիղ կապը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության պետական չափորոշիչ

Մ. Դավթյան << Շրջակա միջավայր և բնապահպանություն >>

<<Էյ-Թի-Փի >> Բարեգործական Հիմնադրամ

<<Նախաշավիղ 2012 . 4 >>

<<Նախաշավիղ 2012 . 5 >>